42(82) 15 ԱՊՐԻԼ ՇԱԲԱԹ 1995

ԱՌԱՎՈՏ

## ՅՂ ԿԱՌ[...] ՅԱՑՏԱՐ

Ուզբեկստանի եւ Թուրք[...]
նությունների պատճառով [...]
դարեցվել է գազի մուտքը [...]
կաս եւ Ուկրաինա: Ժողով[...]
կրում է էական վնասներ: Կրկ[...]
րաէներգիայի մատակարարու[...]
է, որ այս անգամ [...]

# «ԵԿԵՂԵՑԻՆ ՊԵՏՔ ՈՒՆԻ ԼՈՒՐՋ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ»




Ազգային եկեղեցական ժողովի աշխատանքներին մասնակցելու համար աշխարհի չորս ծագերից Մայր հայրենիք ժամանածների մեջ հանդիպեցի նաեւ «Window» («Լուսամուտ») կրոնական հանդեսի հիմնադիր–խմբագիր Հրաչ Չիլինկիրյանին՝ Բեյրութում ծնված, ապա Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում ուսանած մեր երիտասարդ հայրենակցին, որ ուսումնառությունը շարունակելու համար ժամանակին մեկնել է ԱՄՆ՝ տարիներ անց դառնալով Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարանի դեկան: Նա աստվածաբանության ու քաղաքական գիտությունների մագիստրոս է եւ այժմ Անգլիայում պատրաստում է իր դոկտորական թեզը:

*–Հայր, քանի որ Հայաստանում գրեթե անտեղյակ ենք ձեր հրատարակած հանդեսից, կխնդրեի մի քանի խոսքով ներկայացնեիք այն մեր ընթերցողներին՝ ծանոթացնեիք դրա բնույթի եւ ուղղվածության հետ:*

–1990–ին էր, երբ խումբ մը երիտասարդ հոգեւորական եւ աշխարհական հայեր հավաքվելով քով-քովի՝ որոշեցինք հրատարակություն մը սկսել՝ արծարծելու համար հայ եկեղեցվո եւ հոգեւոր մշակույթի հետ կապված բազմաթիվ հարցեր: Լինելով եռամսյա՝ հանդեսը տարեկան լույս կտեսնե չորս անգամ: Ընդ որում, յուրաքանչյուր համար կընդգրկե որոշակի մեկ թեմա: Այսպես, թիվ մը ըրած ենք «Հայ ազատագրական շարժումի աստվածաբանությունը» թեմայով, որը փորձ մըն է հիշյալ տեսանկյունեն դիտելու եւ ընդհանրացնելու ազգային–ազատագրական շարժումի ներկա փուլը: Ըրած ենք նաեւ Մեծ եղեռնի հոգեւոր քարդի, Հայաստանում գործող աղանդներում վերաբերյալ առանձին թիվեր: Նպատակ ունենք ընդգծել մեր ազգային–հոգեւոր մշակույթն ու ավանդությունները եւ սփյուռքահայ հասարակությանը հաղորդակից դարձնել մեր հոգեւոր ժառանգության: Կուզեինք տալ նաեւ հայ եկեղեցու տեսակետներն ընդհանուր ընկերային եւ բարոյական հարցերու վերաբերյալ:

*–Ի՞նչ ոմքե՞ր են ձեր հանդեսի հեղինակները եւ որտեղի՞ց եք քաղում ձեր նյութերը:*

–Ունենք խմբագրական կազմ եւ ելնելով այժմու հայ իրականութենեն՝ կորոշենք արծարծելիք թեմաները: Հիմնական շեշտը կը դնենք հեղինակային հոդվածներու վրա, որոնք տեսականից զատ կձգտին գործնական ազդեցություն ունենալ: «Window»–ի բոլոր աշխատակիցներս կգործենք եկեղեցու մեջ եւ միաժամանակ առնչություն ունինք սփյուռքահայ գաղութային կյանքի հետ: Այդ տեսակետեն մեր քննադատություններու նպատակը վերարժեւորելն է մեր հավաքական ընթացքը եւ որոշ առաջադրություններ ընել՝ բարելավելու համար մեր ազգային–եկեղեցական կյանքը: Մեր «Լուսամուտը» միջոց մըն է արդի հայ հոգեւոր–կրոնական մտածողության տարբեր շերտերը ի հայտ բերելու, ձեւով մը կամուրջ ստեղծելու մեր ժողովրդի ազգային եւ հոգեւոր ինքնության միջեւ:

*–Հետաքրքիր է իմանալ ձեր վերաբերմունքը թե՛ կաթողիկոսական ընտրության, թե՛ ընդհանրապես եկեղեցու կառավարման հարցերում աշխարհականների մասնակցության դերի վերաբերյալ:*

–Աշխարհականներու մասնակցությունը կարեւոր է, որովհետեւ կաթողիկոսը ազգընտիր հայրապետ է: Նաեւ պատմականորեն Հայաստանյայց եկեղեցին միակն է, ուր դարեր շարունակ աշխարհականները մասնակցություն բերած են կաթողիկոսական ընտրությանը: Ասկե զատ «եկեղեցի» բառը ստուգաբանորեն կնշանակե բոլոր հավատացյալներու միախմբում:

*Զրույցը՝ ԼԵՎՈՆ ԼԱՃԻԿՅԱՆԻ*

